Յա.Ի.Խաչիկյան

ՆՈՎԱԼԻՍԸ ԻՄ ԸՆԿԱԼՄԱՄԲ

Շնորհալի երաժշտագետ Նովալիս Վարազդատի Դերոյանի անունը ես առաջին անգամ լսեցի քերևս անցյալ դարի վաթսունական թվականների կեսին, երբ նա աշխատում էր Երևանի պետական կոնսերվատորիայում որպես պրոռեկտոր, իսկ ես զբաղեցնում էի ավագ գիտաշխատողի պաշտոնը ՀԽՍՀ ԳԱ Փիլիսոփայության և իրավունքի սեկտորում: Հետաքրքրությունը նրա անձի նկատմամբ առաջացավ մեր սեկտորում իմ նախաձեռնությամբ 1962 թվականին գեղագիտության խմբի (հետագայում՝ բաժնի) ստեղծումից հետո, որն իմ ղեկավարությամբ ծավալեց բուռն աշխատանք գեղագիտության տեսության և պատմության հարցերի ուսումնասիրության գծով:

Մեր գործունեության ոլորտում հիմնական՝ հետազոտական աշխատանքից բացի, կային նաև որոշ կազմակերպչական հարցեր և առաջին հերթին՝ բուհերում և արվեստով զբաղվող հիմնարկություններում գեղագիտական առումով հեռանկարային մասնագետների բացահայտումը և ներգրավումը մեր խմբի աշխատանքների մեջ: Պետք է ասեմ, որ իմ և խմբի անդամների շահագրգռված ջանքերը եղան արդյունավետ, և մի շարք մասնագետներ Երևանից և Մոսկվայից սիրալիր արձագանքեցին մեր հրավերին և տրամադրեցին իրենց գործերը իմ կողմից հիմնված երկու մատենաշարի գրքերում՝ «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» (լույս է տեսել 8 գիրք) և «Էսթետիկայի հարցեր» (լույս է տեսել 5 գիրք): Հենց այդ ժամանակաշրջանում էր, որ իմ գործընկերներից մեկը (ցավոք, արդեն չեմ հիշում թե ով) տվեց Նովալիսի անունը և բնութագրեց նրան իբրև արվեստի, մասնավորապես երաժշտության տեսական հարցերով զբաղվող մասնագետի, որի գործերին բնորոշ է ձգտումը դեպի բարձր կարգի գեղագիտության հետ սահմանակից ընդհանրացումները:

Նովալիսը իր փարթամ տեսքով, բարեհամբույր դիմագծերով առաջին իսկ հայացքից դրական տպավորություն թողեց և համակրանք առաջացրեց, ինչը, իր խոստովանությամբ, նա նույնպես զգաց իմ հանդեպ: Զրույցի ժամանակ ես իմացա, որ

նա հասարակական գործիչ, թարգմանիչ և, ինչը ինձ համար շատ հարազատ էր, փիլիսոփա, գերմանական փիլիսոփայության լավ գիտակ Վարազդատ Մկրտչի Տերոյանի (Դերոյան) որդին է, իսկ ակադեմիայի աշխատակցուհի, իմ վաղեմի ընկերուհի և բարեկամ Նունեն (Նունիկը) իր հարազատ քույրն է:

Երբ ես նրան հրավիրեցի համագործակցել մեր գեղագիտության խմբի հետ, նա ժպտադեմ շնորհակալությամբ ընդունեց իմ առաջարկը, բայց կասկած հայտնեց, կկարողանա արդյոք, չունենալով մասնագիտական գեղագիտական կրթություն, օգտակար լինել մեզ: Ես հանգստացրի նրան՝ նշելով երկու հանգամանք. նախ՝ մասնակցելով խմբի աշխատանքներին, նա կմերձենա գեղագիտական պրոբլեմատիկային և երկրորդը՝ մենք կտանք նրան գեղագիտության դասագրքեր և մի քանի ականավոր գեղագետների գործեր, որոնք օգտակար կլինեն իր գեղագիտական պաշարը հարստացնելու գործում: Բացի այդ, նշեցի ես, մենք հավակնություն չունենք պահանջել նրանից հարյուր տոկոսանոց գեղագիտական գործեր, մենք բավարարված կլինենք նրան՝ մոտեցնելով գեղագիտությանը և ստանալ իր գործերը՝ գրված երաժշտագիտության ընդհանուր տեսության և գեղագիտության սահմանագծին: Մենք համաձայնության եկանք, և նա համարյա միշտ մասնակցում էր մեր նիստերին, հետաքրքիր, օգտակար ելույթներ ունենում քննարկվող հարցերի շուրջ: Բացի այդ, մենք հաճախ հանդիպում էինք իմ տանը և բովանդակալից զրույցներ ունենում արվեստի, գեղագիտության և հարակից այլ հարցերի մասին: Մեր հարաբերություններն ընթանում էին հարմոնիկ, փոխադարձ խոր հարգանքի մթնոլորտում, այդ պատճառով էլ մեր հանդիպումները երկուսիս էլ տալիս էին մեծ գոհունակություն: Եվ այդ հարաբերությունները պահպանվեցին մինչև վերջ, թեև հետագա տարիներին իմ աշխատատեղի փոփոխության պատճառով նախկինի պես նույն հաճախականությամբ չէինք կարող տեսնվել:

Մեզ հետ համագործակցության տարիներին Նովալիսը աշխատում էր իր «Երաժշտական ստեղծագործության ամբողջականության մի քանի հարցեր» հետաքրքիր դիսերտացիայի վրա, որի շուրջը մենք նույնպես մտքեր էինք փոխանակում: Բարեբախտաբար, 1969-ի ամռանը ՀԽՍՀ ԳԱ արվեստի սեկտորի հիման վրա ստեղծվեց ներկայիս Արվեստի ինստիտուտը

և միաժամանակ կազմավորվեց արվեստաբանության գծով դիսերտացիաների պաշտպանության մասնագիտացված գիտխորհուրդ, որի ստեղծման օրվանից մինչ այժմ ես պատիվ ունեմ այդ խորհրդի անդամը լինելու: Եվ այնպես ստացվեց, որ երբ դիսերտացիան ներկայացվեց պաշտպանության, Նովալիսի և ինստիտուտի տնօրենի՝ իմ լավ բարեկամի, հարգարժան Ռուբեն Զարյանի ցանկությունները համընկան, և ես նշանակվեցի դիսերտացիայի առաջին ատենախոսը: Ի դեպ, դա առաջին պաշտպանություններից էր այդ Գիտխորհրդում, այն տեղի ունեցավ 1970-ի հունվարի սկզբին:

Ծանոթությունը Նովալիսի դիսերտացիայի հետ համոզեց ինձ, որ նրան խորթ չէին գեղագիտական հարցադրումները: Նա իր հետազոտության մեջ դիմում էր նաև գեղագիտության և երաժշտագիտության առնչություններին: Պարզ էր, որ ես իմ պաշտոնական կարծիքում բարձր գնահատեցի հարուստ բովանդակությունը (այն ավելի լայն էր վերնագրից) և տեսական բարձր մակարդակը: Մասնավորապես ես նշեցի հետևյալը. «Դիսերտացիայի հիմնական տեսական բովանդակությունը հանգեցնում է այն, մեր կարծիքով ճիշտ դրույթի պաշտպանությանը, որ երաժշտական ստեղծագործության ամբողջականությունը իրենից ներկայացնում է կարևոր գործոն, որից դուրս հնարավոր չէ հասնել ոչ երաժշտական ստեղծագործության գեղարվեստականությանը, ոչ գեղագիտական ընկալման լիարժեքությանը»:

Նովալիսը իրոք փայլուն ձևով պաշտպանեց իր դիսերտացիան և անցավ ավելի սերտ համագործակցության մեր գեղագիտության օջախի հետ: «Էսթետիկայի հարցեր» մատենաշարում տպագրվեցին նրա «Երաժշտական երկի ընկալման մի քանի օրինաչափությունների մասին» (գիրք 2-րդ, 1972) և «Երաժշտական հնչյունը որպես ընկալման օբյեկտ» (գիրք 3-րդ, 1987) հոդվածները՝ գրված իրեն հատուկ ոճով՝ արվեստաբանության և գեղագիտության սահմանագծին:

Հետագայում, մեզանից անկախ մի շարք օբյեկտիվ պատճառների հետևանքով, գրքաշարի հրատարակումը կանգ առավ, և Նովալիսի երրորդ հոդվածը մի շարք այլ նյութերի հետ ժամանակին չտպագրվեց: Եվ երբ 2009-ին հնարավորություն բացվեց վերսկսել գրքաշարի հրատարակումը, ես նպատակահարմար գտա հաջորդ՝ 4-րդ գրքում ներառել ժամանա-

կին լույս չտեսած որոշ նյութեր: Առաջինը՝ դա արդեն 1995-ի հուլիսի 25-ին կյանքից հեռացած Նովալիսի «Տեսական մի քանի դրույթների և ֆիզիկական օրինաչափությունների մոդելավորումը երաժշտության մեջ» հոդվածն էր, որը ես որոշեցի ներկայացնել ժամանակին ինձ հանձնված ձևով՝ առանց կրճատումների և լուրջ խմբագրական սրբագրման, «դրանով իսկ (ինչպես նշեցի գրքի առաջաբանում) ոչ միայն տուրք տալով կյանքից անժամանակ հեռացած բարեկամիս հիշատակին, այլև հուսալով, որ այն կարող է դրդել մասնագետներին խորհել այդ թեմայի շուրջ»:

Այս կապակցությամբ ուզում եմ հիշատակել իմ գնահատականներից մեկը, որ ես տվել էի Նովալիսի դիսերտացիային: Ես որոշակիորեն ընդգծեցի, որ այն չի հանդիսանում այլ մասնագետների հայացքների կոմպիլյատիվ շարադրանք, այլ ընդհակառակը՝ հեղինակը, հենվելով իր նախորդների և ժամանակակիցների աշխատությունների վրա, առաջարկում է լիովին ինքնուրույն կոնցեպցիա: Նույնը կարելի է ասել և Նովալիսի հոդվածների մասին, որոնք ըստ իս ունեն նորարարական բնույթ: Նա սիրում էր մխրճվել քննարկվող հարցերի խորքերը կամ շարժվել բոլորովին այլ ուղիներով:

Անցել է արդեն 16 տարի, ինչ Նովալիսը հեռացել է մեզանից, բայց ես վառ կերպով հիշում եմ մեր բարեկամությունը, որը պարուրվում էր բուն մարդկային, ես կասեի բարոյագեղագիտական պատյանով:

Հավերժ հիշատակ իմ լավ ընկերներից մեկին՝ Նովալիսին: